

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

23 հունվար 2015 թ

N 2

**Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ**

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏ ՀԱՄԱՐՎԵԼՈՒՑ ԴԱԴԱՐԵԼՈՒ  
ԵՎ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ ՀԱՄԱՐՎԵԼՈՒ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտը դադարում է համարվել որպես այդպիսին «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13.9-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում: Մասնավորապես, անձը դադարում է համարվել ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ, եթե իր հաշվառման վայրի հարկային մարմին է ներկայացրել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած ձևով հայտարարություն՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության ներկայացման օրվանից մինչև տվյալ տարվա ավարտը:

«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն Հայաստանի Հանրապետությունում շրջանառության հարկ վճարող կարող են համարվել նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանները բավարարող Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ համարվող առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասում նշված դեպքերի՝ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու օրվանից մինչև տվյալ տարվա ավարտը (բացառությամբ օրենքով նախատեսված՝ տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե անձինք ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու օրվանից մինչև այդ օրվան հաջորդող 20-րդ օրն իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացրել վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած ձևով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու և շրջանառության հարկ վճարող համարվելու դրույթների կիրառման հետ կապված հարցերի ճշտման նպատակով և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասով, ***պաշտոնապես պարզաբանում եմ.***

1. Ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտը տվյալ տարվա ընթացքում «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով սահմանված պայմաններին բավարարելու դեպքում իր հայեցողությամբ կարող է իր հաշվառման վայրի հարկային մարմին ներկայացնել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն և համարվել շրջանառության հարկ վճարող՝ հայտարարության մեջ նշված ժամկետից (բայց ոչ շուտ, քան հայտարարության ներկայացման օրվանից) մինչև տվյալ տարվա ավարտը:

2. Եթե ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտը որպես այդպիսին համարվելուց դադարելու նպատակով ներկայացրել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն, սակայն հետագայում պարզվում է, որ շրջանառության հարկ

վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության մեջ նշված ժամկետից ավելի վաղ ժամկետում ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտը դադարել է համարվել որպես այդպիսին «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13.9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով սահմանված փաստերն ի հայտ գալու հիմքով, ապա «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով սահմանված պայմաններին բավարարելու դեպքում անձը կարող է ներկայացնել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ նոր հայտարարություն և համարվել շրջանառության հարկ վճարող՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13.9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով սահմանված փաստերը տեղի ունենալու օրվանից մինչև տվյալ տարվա ավարտը, եթե չի լրացել այդ փաստերը տեղի ունենալու օրվան հաջորդող 20-րդ օրը: «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13.9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով սահմանված փաստերը տեղի ունենալու օրվան հաջորդող 20 օրվա ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ նոր հայտարարություն չներկայացնելու դեպքում անձը «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան համարվում է ավելացված արժեքի հարկ վճարող:

**Նախարարի ժամանակավոր  
պաշտոնակատար՝**

**Ա. Աֆրիկյան**